

ԵՐԵՔ ՄԵԾ ՍԻՐՏ

1926 թվականին Մարինա Ցվետանայի, Ռայներ Մարիա Ռիլկեի ու Բորիս Պաստերնակի միջև ծավալվում է մի նամակագրություն, որ հետաքրքիր է ոչ միայն ու ոչ այնքան երեք մեծագույն բանաստեղծների անձնական կյանքի, որքան մարդկային յուրօրինակ ու արտասովոր հարաբերությունների և, վերջապես, պոեզիայի հավերժական առեղծվածների ու որոնումների բացահայտումներով:

Ռայներ Մարիա Ռիլկեն Ռուսաստանը ծանաչում է 1899 -1900-ական թվականներին: Հոգնած եվրոպական ուրբանիզացիայի՝ մարդկային հոգում կատարած ավերածություններից՝ նա այստեղ՝ Ռուսաստանում, տեսնում է մի ուրիշ աշխարհ՝ անաղարտ՝ իր նախնականությամբ ու պարզությամբ: Իր առաջին այցից 25 տարի հետո՝ լեի գրականագետ Վ. Գուլկիչի հետ ունեցած զրույցի ժամանակ, Ռիլկեն այսպես է պատմում Ռուսաստանում գտնված իր առաջին ժամերի մասին. «Հյուրանոցում թեթև շունչ առնելուց հետո, չնայած հոգնածությանը, իսկույն ուղևորվեցի քաղաք: Եվ ահա թե ինչի ականատես եղա. մթնշաղի մեջ վեր էին խոյացել եկեղեցու ուրվագծերը, իսկ մշուշի մեջ՝ նրա շուրջը, կանգնել էին ուխտավորները՝ սպասելով եկեղեցու դռների բացվելուն: Այդ անսովոր տեսարանը ցնցեց ինձ մինչև հոգուս խորքը: Կյանքում առաջին անգամ ինձ մի անասելի զգացում համակեց. ասես հայրենիքում լի՛նեի»: Հետագայում նամակներից մեկում Մարինա Ցվետանան Ռիլկեին կգրի. «Ես եմ քո Ռուսաստանը»՝ Ռիլկեի համար բացահայտելով մի նոր Ռուսաստան:

1919 թվականին Ցվետանան Գերմանիայի մասին գրում է. «Իմ կիրքը, իմ հայրենիքը, իմ հոգու օրորոցը»: Գերմանիայի նկատմամբ սեր նրա մեջ արթնացնում է մայրը: 1904-1905 թվականներին նա սովորում է Լոզանի մոտ գտնվող Լակազ կաթոլիկական պանսիոնում, որտեղ էլ սկսվում է նրա ծանոթությունը գերմանական գրականությանը: Ռիլկեի պոեզիային նա ծանոթանում է հասուն տարիքում, և Ռիլկեն նրա համար դառնում և տարիների ընթացքում շարունակում է մնալ իսկական «պոեզիայի մարմնացում»: 1922 թվականից ապրելով Ֆրանսիայում՝ նա նամակագրական կապ ուներ Բորիս Պաստերնակի հետ: Հոգեկան և ստեղծագործական ձգնաժամի մեջ տառա-

պող Պաստեռնակի համար Յվետաևան ամեն ինչ էր. նա Պաստեռնակի առաջին ընթերցողն ու քննադատն էր, նրա ստեղծագործությունների գնահատողն ու արժևորողը, բայց առաջին հերթին՝ նրա մեծ բարեկամը: Պաստեռնակին ու Յվետաևային նաև միավորում էր մեծ սերը գերմանացի նշանավոր բանաստեղծ Ռայներ Մարիա Ռիլկեի նկատմամբ: Ռիլկեին ու Յվետաևային «ծանոթացնում է» Պաստեռնակը. նա վտարանդիության մեջ դժվար կյանքով ապրող բանաստեղծուհուն «նվեր» է մատուցում՝ խնդրելով Ռիլկեին նրան ուղարկել իր «Սոնետներ Օրփեոսին» ու «Դուփնյան էլեգիաներ» բանաստեղծական ժողովածուները: Ռիլկեն կատարում է Պաստեռնակի խնդրանքը, ու Յվետաևայի և Ռիլկեի միջև սկսվում է նամակների ... հրավառություն:

Պաստեռնակին գրած նամակներից մեկում Յվետաևայի այն հարցին, թե. «Մենք միասին ի՞նչ կանեինք կյանքում», հետևում է Պաստեռնակի պատասխանը. «Մենք կգնայինք Ռիլկեի մոտ»: Այսպես ծնվում է Ռիլկեի՝ «Իրենց կյանքի մասի» մոտ գնալու պլանը, որն էլ հենց դառնում է երեք բանաստեղծների՝ 1926 թվականին միմյանց գրած նամակների լեյտմոտիվը:

Երկրային կյանքում այդպես էլ Յվետաևան ու Պաստեռնակը չհանդիպեցին Ռիլկեին. ողջ նամակագրության ժամանակ՝ 1922-1935 թվականներին իրար չհանդիպեցին նաև Յվետաևան ու Պաստեռնակը....

Նուրբ ու թրթռուն, երբեմն ջղաձիգ ու խիտ տողերի մեջ տրոփում է երեք շռայլ սիրտ և չխամրող ու չխուճացող զգացմունքները մեզ փոխադրում են մեծ հոգիների եզակի ու թանկ ուրիշ աշխարհ...

Թանկագին բարեկամ,

ստացե՛լ ես արդյոք իմ վերջին նամակը: Հարցնում եմ, որովհետև այն գցել եմ հեռացող գնացքի մեջ: Շատ չարագուշակ տեսք ուներ փոստարկղը՝ վրան երեք մատ փոշի ու հսկայական բանտային կողպեք: Ես դա նկատեցի նամակը գցելուց հետո միայն. ձեռքս չափազանց շտապեց. նամակը երևի այնտեղ էլ կմնա մինչև երկրորդ գալուստը:

Սոտավորապես տասն օր առաջ էր: Բովանդակությունը: Նամակն արդեն բովանդակություն է, հետևաբար, չունի բովանդակություն, բայց և այնպես, չմտնելով մանրամասների մեջ, կա որոշ բան այն մասին, որ քննեք իրար հետ, ինձ և քեզ (et le lit-table évanouie¹):

Անկողին, որպեսզի	}	գուշակես իրերը, հրաշքներ տեսնես,	սեղան, որպեսզի	}	դրանք ստեղծես դրանք մարմնավորես:

Անկողինը մեջքն է, սեղանը՝ արմունկը: Մարդը ինքն է անկողինն ու սեղանը, ուրեմն պետք չէ դրանք ունենալ: (Այն նամակը հնչում էր բոլորովին այլ կերպ, և զնացքը, որ բերում ու թաքցնում է այն, սուլում ու ոռնում էր այլ կերպ, քան մարդատարը: Եթե լսեմ նրա ձայնը, իսկույն կհասկանամ՝ դեռ այնտե՛ղ է արդյոք իմ նամակը):

Թանկագին Ռայներ, Բորիսն [Պաստեռնակ] ինձ այլևս չի գրում: Վերջին նամակում նա գրել էր. «Իմ մեջ եղած ամեն ինչ, բացի կամքից, կոչվում է Դու և Քեզ է պատկանում»: Նա կամք է անվանում իր կնոջն ու որդուն, ովքեր հիմա արտասահմանում են: Երբ իմացա նրա այդ երկրորդ արտասահմանի մասին, գրեցի. «Երկու նամակ արտասահմանից: Բավական է: Երկու արտասահման չի լինում: Կա այն, ինչ սահմանի ներսում է, և այն, ինչ դուրս է նրանից. ես սահմանից դուրս եմ: Ես ամբողջական եմ, չեմ կիսվում»:

Թող կինն իրեն գրի, իսկ ինքը՝ կնոջը: Քնել նրա հետ և գրել ինձ, այո՛, իհարկե: Գրել նրան և գրել ինձ, երկու ծրար, երկու հասցե (մե՛կ Ֆրանսիա)՝ հարազատացած ձեռագրերով, ասես քույրեր լինեն... Ընդունել նրան որպես եղբայր, այո՛, բայց կնոջը՝ որպես քույր, չեմ կարող:

Այսպիսիսն եմ ես, Ռայներ: Ցանկացած մերձեցում մարդու հետ կղզի է՝ և միշտ ջրասույզ, ամբողջովին, առանց մնացորդի:

1 «և անկողինը... հիշողությունը կորցրած սեղան» (Ֆր.), տող Ռիլկեի «Այգիներ» ֆրանսերեն զրված ժողովածուից:

Ուրիշ մարդու մեջ ինձ պատկանում է ծակատը և մի քիչ էլ կուրծքը: Սրտից հեշտ եմ հրաժարվում, կրծքից չեմ հրաժարվի: Ինձ հնչում կամար է պետք: Սիրտը խուլ է հնչում:

Ռայներ, ինձ բացիկ ուղարկիր, գրիր ընդամենը երկու բառ. մամակը, որ գնացքում էր, ստացա՞ր, թե՞ ոչ: Այդ դեպքում քեզ մեծ մամակ կգրեմ:

Ռայներ, այս ծննդանի մենք պետք է հանդիպենք: Ինչ-որ տեղ ֆրանսիական Սավոյայում՝ շատ մոտիկ Շվեյցարիային, այնտեղ, որտեղ դու երբեք դեռևս չես եղել (կգտնվի արդյոք այդպիսի երբեքը՝ կասկածում եմ): Մի փոքրիկ քաղաքում, Ռայներ: Կուզես՝ երկար ժամանակով, կուզես՝ կարճ: Այդ մասին գրում եմ քեզ ուղղակի, որովհետև գիտեմ, որ դու ոչ միայն ինձ շատ կսիրես, այլև շատ ուրախ կլինես ինձ տեսնելու համար: (Ուրախության կարիք դու էլ ունես):

Կամ աշնանը, Ռայներ: Գուցե գարնա՞նը: Ասա՝ այո՛, որ այդ օրվանից ես նույնպես ուրախանամ, որ ես կարողանամ ինչ-որ կողմ նայել (շո՛րջս նայել):

Արդեն շատ ուշ է, և ես հոգնել եմ, այդ պատճառով գրվում եմ քեզ:

Մարինա

Անցյալը դեռ ամջում է¹...

ՈԱՅՆԵՐ ՄԱՐԻԱ ՌԻԼԿԵՆ՝ ՄԱՐԻՆԱ ՑՎԵՏԱԵՎԱՅԻՆ

*Հյուրանոց Հոֆ Ռազաց
Ռազաց (Սեն Գալի շրջան)
Շվեյցարիա*

Այն գնացքը, Մարինա (քո նախորդ մամակի հետ), գնացքը, որին հետո հրաժարվեցիր վստահել, սլանալով հասավ ինձ՝ լիովին ուժասպառ. չարագույժ փոստարկղը ծերացած էր, ինչպես ծերացած են ուղտերն ու կոկորդիլոսները՝ պատանեկության օրերից արդեն ծերությամբ պաշտպանված. շատ հուսալի առանձնահատկություն: Այո՛, այո՛, դարձյալ այո՛, Մարինա, այո՛ այն ամենին, ինչ ուզում ես ու կաս. դրանք բոլորը, միասին գումարվելով, դառնում են մի մեծ Այո՝ ասված հենց կյանքի կողմից... Բայց նրանում ընդգրկված են նաև բոլոր տասը հազար անկանխատեսելի Ոչ-երը :

Եթե ես ավելի քիչ եմ համոզված, որ մեզ վիճակված է միանալ, դառնալ ասես երկու շերտ, նրբորեն իրար կիպ կպած հողաշերտեր, մեկ բնի երկու կես (ես կուզեմայի հիշել, թե ռուսերեն ինչն է Nest²-ը (մոռացել եմ), Nest՝ քնե-

1 Ցվետանայի կողմից ոչ միշտ մեջբերված տող Ռիլկեի «Ժամգիրք» բանաստեղծությունից:

2 Ռոյն (գերմ.):

լու համար, որտեղ ապրում է մեծ թռչունը, գիշատիչ թռչունը Հոգու (չկկոցեն աչքերդ)... եթե ես ավելի քիչ եմ համոզված (քան դու)... (ապա անսովոր և չնահանջող այն ժանրությունից, որ զգում եմ, ու հաճախ ինձ թվում է՝ էլ ուժ չունեմ այն հաղթահարելու, այնպես որ սպասում եմ ոչ թե բուն հանգամանքներին, երբ դրանք կծառանան իմ առջև, այլ ինչ-որ յուրահատուկ ու հավատարիմ օգնություն եմ ակնկալում դրանցից՝ ներդաշնակ ու աջակի՞ց)... բայց և այնպես ես ոչ պակաս (հակառակը՝ նույնիսկ ավելի ուժգնորեն) կարիք ունեմ մեկ անգամ ինձ հատկապես **այդպես** ազատագրելու խորքերի խորքից ու անհատակ ջրհորից: Իսկ մինչ այդ դեռ երկար ժամանակ կա, օրեր շարունակ այդ հանգամանքների կրկնվելու վախ, վախ (հանկարծակի) պատահականություններից, որոնք ոչինչ չգիտեն և ընդունակ էլ չեն իմանալու:

...Մի՛ հետաձգիր մինչև ծնեմ...

«Կարող ես չպատասխանել...», - ավարտել ես դու: Այո՛, հավանաբար ես կարող եմ չպատասխանել, բայց ի՞նչ գիտես, Մարի՛նա, մի՞թե ես չեմ պատասխանել մինչև այն պահը, երբ դու հարցրիր: Արդեն այն ժամանակ Վալ Մոնում ես փնտրում էի այն քարտեզի վրա. *Cette petite ville en Savoie!*..., այժմ այդ դու՛ ես ասում: «Դո՛ւրս ելիր ժամանակից, արա՛ այնպես, ասես ամեն ինչ արդեն եղել է», - մտածեցի ես՝ կարդալով քեզ: Բայց նամակիդ աջ կողմում, դու ինքդ գրել ես. «Անցյալը դեռ առջևում է»... (Առեղծվածային տող, բայց ինչպիսի՞ տազնապալի կոնտեքստում):

Ուրեմն, մոռացիր, սիրելի՛ս, իսպառ մոռացիր՝ ով ինչ հարցրեց ու ասաց և պաշտպանության ու իշխանության տակ վերցրու՛ դա (ինչի էլ որ վերածվի) հանուն այն ուրախության, որ կրում ես դու, որի կարիքն ունեմ ես և որ հավանաբար ես նույնպես կրում եմ, երբ հանդիպման համար առաջինը դու ես քայլ անում (այն արդեն արված է):

Բորիսի լռությունն անհանգստացնում ու վշտացնում է ինձ, ուրեմն, այնուամենայնիվ, իմ հայտնվելը արգելափակե՞ց այն ձանապարհը, որով նա այնպես բուռն ձգտում էր դեպի քեզ: Ու թեև ես լիովին հասկանում եմ՝ ինչ նկատի ունես՝ խոսելով երկու «արտասահմանի» (իրար բացառող) մասին, ես, այնուամենայնիվ, կարծում եմ, որ դու խիստ ու համարյա դաժան ես նրա հանդեպ (ու խիստ իմ հանդեպ՝ ցանկանալով, որ ինձ համար երբեք ու ոչ մի տեղ չլինի ուրիշ Ռուսաստան, բացի՝ քեզնից): Բողոքում եմ ցանկացած բացառության դեմ (այն արմատավորվում է սիրո մեջ, բայց մեծանալով անզգայանում է...): Ընդունու՛մ ես արդյոք ինձ, երբ ես այսպիսին եմ, **նաև** այսպիսին:

Ռայմեր

1 Այդ փորձիկ քաղաքը Սավոյում (ֆր.):

ԱԵՆ ԺԻ, 22 ՕԳՈՍՏՈՍԻ 1926

Ռանյներ, միայն այդ ասա՛ այն ամենին, ինչ ես եմ ուզում, ու հավատա՛ ոչ մի սարսափելի բան չի պատահի: Ռանյներ, երբ ասում եմ քեզ, թե ես քո Ռուսաստանն եմ, քեզ միայն ասում եմ (մեկ անգամ ևս), որ սիրում եմ քեզ: Սերն ապրում է բացառություներով, մեկուսացումներով, հեռացումներով: Սերն ապրում է բառերի մեջ և մեռնում արարքների մեջ: Իրականում ձգտել՝ քո Ռուսաստանը լինել. դրա համար ես չափազանց խելոջ եմ: Խոսքի դարձվածք: Սիրո դարձվածք:

Ռայներ, ես այլ եմ. ես այն ամենն եմ, ինչ դու ես, քո ողջ գոյությունն է (գոյություն ունենալ նշանակում է՝ քեզնով ապրել: Etre vécu.: Chose vecue¹:

Հավատում ես արդյոք, որ ես հավատում եմ Սավոյային: Հավատում եմ, ինչպես և դու, ասես երկնային արքայությանը: Երբեք... (Ինչպես, ե՞րբ): Ի՞նչ եմ տեսել ես կյանքում: Իմ ողջ երիտասարդությունը (սկսած 1917 թ-ից) եղել է սև աշխատանք: Մոսկվա՞ն: Պրահա՞ն: Փարիզ՞ը: Սեն Ժիլ՞ը: Ամեն տեղ նույնն էր: Սալոջախ, ավել, փող (դրա չլինելը): Հավերժորեն ժամանակ չունենալը: Քո ընկերուհիներից և ծանոթներից ոչ մի կին այդպես չի ապրում, չէր կարողանա այդպես ապրել: Չավել, չմաքել, ահա իմ երկնային արքայությունը: Չափազանց համեստ է: Այո՛: Քանի որ չափազանց անմաքուր է իմ երկրային արքայությունը: Ռայներ, ես գերմաներեն եմ գրում՝ մաքրել [feigen(գերմ)], այսինքն՝ Քավարան [Fegfeuer(գերմ)] (հիասքանչ բառ է): այստեղ մաքրել, այնտեղ քավարան, մաքրել, քանի դեռ ջնջել քավարան... Ես այդպես եմ գրում, Ռայներ, բառ... իր՝ ստեղծելով բառը բառի հետևից: Կարծում եմ՝ դու նույնպես:

Ուրեմն, սիրելիս, մի՛ վախեցի՜ր և միշտ միայն այո ասա՛ իմ ամեն

«ԵՐԵՎԱՆ»
-ԻՆ

այդպես անմեղ ու անպատասխանատու են մխիթարում աղքատներին: Իմ մեկնած ձեռքը շատ հաճախ դատարկության մեջ է մնում, իսկ ողորմությունը թափվում է ավազի մեջ: Ի՞նչ եմ ես ուզում քեզնից: Այն, ինչ որը պոեզիայից և բանաստեղծության յուրաքանչյուր տողից՝

ժշնարտություն } ցանկացած
 } ակնթարթի: Դա է ամենամեծ ժշնարտությունը:
 } տվյալ

Երբեք չթմրելով, մոլեգնելով անդադար: Միայն բառ եմ ուզում. այն ինձ համար արդեն իր է: Արարքն՝: Հետևանքն՝:

Ես գիտեմ քեզ, Ռայմեր, ինչպես ինքս ինձ գիտեմ: Ինչքան հեռու ինձնից, այնքան ավելի խորը իմ մեջ: Ապրում եմ ոչ թե ինքս ինձ հետ, այլ ինձնից դուրս: Ես չեմ ապրում շուրթերիս վրա, և նա, ով համբուրում է ինձ, չի դիպչում ինձ:

1 Իրական գոյություն: Իրական կենցաղ (\$ր.):

Սավոյա: (Խորհրդածություններ)։ Գնացք: Տոմա: Հյուրանոց: (Փառք Աստ-
ծո, թույլտվություն պետք չէ): Եվ... թեթևակի նողկանք: Ինչ-որ նախապատ-
րաստություն, նվաճում... աղերսանք: Դու երկնքից պետք է ընկնես:

Ռայներ, ամենայն լրջությամբ. եթե դու, ըստ նշանակման՝ աչքով ես ցանկա-
նում տեսնել ինձ, դու պետք է գործի անցնես, այսինքն. «Երկու շաբաթ հետո
ես կլինեմ այնտեղ ու այնտեղ: Կգա՞ն»: Դա պետք է քո հոգուց բխի: Ինչպես
և ամսաթիվը: Ու քաղաքը: Նայիր քարտեզին: Լավ չի լինի՞ արդյոք, եթե այն
մեծ քաղաք լինի: Մտածի՛ր: Փոքր քաղաքները հաճախ խաբուսիկ են: Հա, մի
բան էլ. ես բոլորովին փող չունեմ, գրոշները, որ վաստակում եմ, նույն պահին
էլ անհետանում են (իմ «նորարարության» պատճառով ինձ տպում են միայն
«նորագույն» ամսագրերում, իսկ վտարանդիության մեջ դրանք երկուսն են):
Կբավարարի՞ արդյոք քո գումարը երկուսիս: Ռայներ, գրում եմ և ժպտում. այ
քեզ հյու՛ր:

Ուրեմն, սիրելիս, եթե երբևէ դու իսկապես ուզեցնաս, գրիր ինձ (նախօրոք.
չէ՞ որ պետք է գտնեմ ինչ-որ մեկին, որ մնա երեխաներիս մոտ), և այդ ժամա-
նակ ես կգամ: Սեն ժիլում ես կմնամ հոկտեմբերի 1-15-ը, հետո կմեկնեմ Փա-
րիզ, որտեղ ամեն ինչ կսկսվի նորից. ո՛չ փող, ո՛չ բնակարան, ոչինչ: Ես Պրահա
չեմ վերադառնա, չեխերը բարկանում են ինձ վրա այն պատճառով, որ ես այդ-
քան շատ ու ջերմորեն գրել եմ Գերմանիայի մասին և այդպես համառորեն
լռել եմ Չեխիայի մասին: Չէ՞ որ 3,5 տարի ապրել եմ չեխական «նպաստով»
(ամսական 900 կրոն): Ուրեմն հոկտեմբերի 1-15-ը կլինեմ Փարիզում: Նոյեմբե-
րից շուտ չենք հանդիպի: Ի միջի այլոց, կարելի է մաս ինչ-որ տեղ Հարավում
(հասկանալի է, որ Ֆրանսիայում): Որտե՞ղ, ինչպե՞ս ու ե՞րբ ես ուզում (սկսած
նոյեմբերից): Հիմա ամեն ինչ քո ձեռքում է: Եթե ուզում ես, կարող ես... բաց
թողնել: Ես միևնույն է, կսիրեմ քեզ՝ ոչ շատ, ոչ քիչ:

Ես քեզնով այնպես եմ ուրախանում, ասես դու նոր աշխարհ ես՝ ամբող-
ջական ու բովանդակ:

Բորիսի մասին: Ո՛չ, միշտը ես էի: Նրա պատասխանը ազատագրված
Ատլասի պատասխան էր: (Չէ՞ որ նա իր գլխին էր պահում երկինքը երկնա-
բնակների՝ հետ: Եվ ազատվելով իր բեռից՝ նա, կարծում եմ, նույնիսկ շունչ
քաշեց): Հիմա նա ազատվել է ինձնից: Նա չափազանց բարի է, չափազանց
կարեկից, չափազանց համբերող: Հարվածը ես պետք է հասցնեի: (Պոկել,
այսինքն՝ սպանել ոչ ոք չի՝ ուզում): Նա արդեն գիտեր երկու արտասահմանի
մասին: Ես միայն արտահայտվել եմ, անվանել, կախարդել: Հիմա ամեն ինչ
լավ է, պետություններն անջատված են. ես ամենաթաքուն խորքերում եմ, բո-
լոր սահմաններից դուրս՝ անհասանելի:

Nest-ը ռուսերեն նշանակում է г н е з д о¹ (եզակի թվով, անհանգ է: Հոգնակին կլինի г н е з д а (փափուկ ե-ով, արտասանությամբ համարյա о), հանգեր՝ з в е з д ы²):

Դեռ երկա՛ր ես մնալու Ռազացում, իսկ ինչպե՛ս ես: Ի՞նչ ես գրել վերջին օրերին: Հա՛, մի մեծ խնդրանք ունեմ: Նվիրիր ինձ հունական (գերմաներենով) առասպելների գիրքը առանց փիլիսոփայության, պարզ ու մանրամասն, միայն առասպելները: Մանկության տարիներին, կարծում եմ, ունեցել եմ Շտոլլի գիրքը: Շուտով լույս կտեսնի իմ «Թեսևսը» (1-ին մաս. «Թեսևսը և Արիադնան», դրամատիկ պոեմ է.): Հիմա սկսում եմ «Ֆեդրան» (ամբողջը մտածված է որպես եռերգություն՝ «Արիադնա, Ֆեդրա, Հեղինե»), և ինձ առասպելների գիրք է հարկավոր:

Լեյտնոտիվը Ափրոդիտեի վրդովմունքն է: Ի՞նչ ափսոս, որ դու չե՛ս կարող ինձ կարդալ: Ես քո առջև խուլուհամր եմ (իրականում խուլ չեմ, համր եմ):

Նվիրիր ինձ Շտոլլի առասպելների գիրքը միայն թե մակագրությամբ, որպեսզի ես երբեք չբաժանվեմ դրանից: Կնվիրե՛ս:

Գրկում եմ Քեզ:

Ս.

Սեն Գալ - Սեն Ժիլ...

Ցվետական չգիտեր, որ Ռիլկեն մահացու հիվանդ է. նրա առողջական վիճակի լրջությունը գաղտնիք էր նույնիսկ բանաստեղծի մերձավորների համար:

Ռազացից Ռիլկեն գնում է Լոզանի մոտ գտնվող Ուշի քաղաք, այցելում է Սավոյայի սահմանում ապրող Պոլ Վալերիին և հոկտեմբերի սկզբին վերադառնում է Սյեր: Նա ապրում է Բելվյու հյուրանոցում: Նրա քարտուղարը Լոզանի համալսարանի բանասիրական ֆակուլտետը նոր ավարտած մի ռուս աղջիկ էր՝ Եվգենյա Չերնոսվիտովան: Իրեն այցելող ընկերներին Ռիլկեն ասում է, որ ինքը նորից վերադարձել է իր վաղ տարիների հիշողություններին ու տպավորություններին, և որ Չերնոսվիտովան իր խնդրանքով ռուսերեն կարդում է Ռուսաստանի կայսերական թատրոնների նախկին տնօրեն իշխան Ս. Ս. Վոլոնսկու հիշողությունները:

Ռիլկեն չի պատասխանում Ցվետականի նամակին և ծանր տանելով նրա լռությունը, ինչպես կորուստը՝ Ցվետական նրան Մյուլզո դոյակ բացիկ է ուղարկում Փարիզի արվարձան Բելվյուի տեսարանով, ուր մեկնել էր ինքը Վանդեյից սեպտեմբերի կեսերին:

1 Բույն (ռու.):

2 Աստղեր (ռու.):

ՄԱՐԻՆԱ ՅՎԵՏԱՆՎԱՆ՝ ՈԱՅՆԵՐ ՄԱՐԻԱ ՌԻԼԿԵՆՆ

**Բելվյու (Սենա և Ուզա)
Փարիզ, Բուլվար Վեր 31,
7 նոյեմբերի 1926**

Թանկագի՛ն Ռա՛յներ

Ես ապրում եմ այստեղ:

Դու դեռ սիրո՞ւմ ես ինձ:

Մարինա:

**Նախաբանը և նամակների թարգմանությունը՝
Կարինե ՄԵՍՐՈՊՅԱՆԻ**